

**ՀՀ Ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/6**

**1 մարտի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Արմեն Մխիթարյանի 26.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 30.12.2015 թ-ի թիվ 310733/01 որոշման դեմ:

**Ա/Ձ Արմեն Մխիթարյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Արմեն Մխիթարյանը հայտնում է, որ բազմիցս փորձել է էլեկտրոնային եղանակով ուղարկել 3-րդ եռամսյակի հաշվետվությունը, ինչը, սակայն, իրեն չի հաջողվել: Հաջորդ օրը Ա/Ձ Արմեն Մխիթարյանին հեշտությամբ հաջողվել է ուղարկել հաշվետվությունը, սակայն հաջորդ օրն արդեն իսկ դիտվել է որպես սահմանված ժամկետի խախտում: Ա/Ձ Արմեն Մխիթարյանը պնդում է, որ հաշվետվությունը ուշ ներկայացնելը պայմանավորված է եղել էլեկտրոնային համակարգի ոչ նորմալ աշխատանքով:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արմեն Մխիթարյանը խնդրում վերանայել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 30.12.2015 թ-ի թիվ 310733/01 որոշումը:

**ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 30.12.2015թ-ի թիվ 2647 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Արմեն Մխիթարյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ-ի 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 30.12.2015թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 310733/01 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Արմեն Մխիթարյանի նկատմամբ 20.000 դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասին:

Հանձնաժողովը գտնում է, որ Որոշումն ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված պահանջների խախտմամբ: Այսպես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ

շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Քննարկվող դեպքում 2015թ-ի 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար Ա/Ձ Արմեն Մխիթարյանը Որոշմամբ վարչական տույժի է ենթարկվել միայն 30.12.2015թ-ին, այն դեպքում, երն խախտումը նրա կողմից թույլ է տրվել 2015թ-ի հոկտեմբերի 21-ին: Այսինքն, վարչական տույժը նշանակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ, այն է՝ իրավախախտումը կատարվելու օրվանից երկու ամիս հետո ընկած ժամանակահատվածում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Արմեն Մխիթարյանի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 30.12.2015 թ-ի թիվ 310733/01 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**